ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 05 » ապրիլ 2024թ. No 1941 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1500-24 առ 01.04.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու (ԵԱՏՄ գրանցման փոխադարձ ճանաչում) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 3 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Ռոմանովային՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված «Տանտում Վերդե» տեղային կիրառման լուծույթ և «Տանտում Վերդե» ցաղաշիթ տեղային կիրառման դեղերի N 20031/1/1 և N 20024 գրանցման հավաստագրերը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի ապրիլի «05 » - ի N 1941 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Տանտում Վերդե	բենզիդամին (բենզիդամինի հիդրոքլորիդ)	լուծույթ բերանի խոռոչի ողողման	150մգ/100մլ; 120մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ, 240մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ, 500մլ պլաստիկե շիշ և չափիչ բաժակ	Ազիենդե Քիմիքե Ռիունիտե Անգելինի Ֆրանչեսկո Ա.Ք.Ռ.Ա.Ֆ. Ս.պ.Ա., Վիա Վեկիա դել Պինոկիո, 22-60100 Անկոնա	Իտալիա	Ազիենդե Քիմիքե Ռիունիտե Անգելինի Ֆրանչեսկո Ա.Ք.Ռ.Ա.Ֆ. Ս.պ.Ա., Վիալե Ամելիա, 70, Հռոմ	Իտալիա	ԱԴ	22023 (001944) 29.03.2024
2	Տանտում Վերդե	բենզիդամին (բենզիդամինի հիդրոքլորիդ)	ցողաշիթ տեղային կիրառման	0,255մգ/դեղաչափ; 30մլ (176 դեղաչափ) պլաստիկե տարա դեղաչափիչ մխոցով	Ազիենդե Քիմիքե Ռիունիտե Անգելինի Ֆրանչեսկո Ա.Ք.Ռ.Ա.Ֆ. Ս.պ.Ա., Վիա Վեկիա դել Պինոկիո, 22-60100 Անկոնա	Իտալիա	Ազիենդե Քիմիքե Ռիունիտե Անգելինի Ֆրանչեսկո Ա.Ք.Ռ.Ա.Ֆ. Ս.պ.Ա., Վիալե Ամելիա, 70, Հռոմ	Իտալիա	ԱԴ	22024 (001823) 29.03.2024
3	Միլգամա	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), ցիանոկոբալամին, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)	լուծույթ մ/մ ներարկման	100մգ/2մլ+100մգ/2մլ+1մգ/2մլ+ 20մգ/2մլ; (5/1x5/) ամպուլներ 2մլ տակդիրում, (10/2x5/) ամպուլներ 2մլ տակդիրում, (25/5x5/) ամպուլներ 2մլ տակդիրում	Սոլուֆարմ Ֆարմացոյտիշե Էրզոյզնիսե ԳմբՀ, Ինդուստրիշտր. 3, 34212, Մելզունգեն- բալք արտադրող, փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, Լաբոր Լ.Ս ՍԵ և Քո. ԿԳ, Մանգելսֆելդ 4, 5, 6, 3 Բադ Բոկլետ- Գրոսենբրախ, Դ- 97708, Գերմանիա- որակի հսկող (մանրէաբանական)	Գերմանիա	Վոերվագ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ, Ֆլուգֆելդ-Ալլե 24, 71034 Բոեբլինգեն	Գերմանիա	Դ	22025 (009562) 29.03.2024